


Հաստատում եմ
Վայոց ձորի մարզպետարանի
Ներքին աուդիտի բաժնի պետ

 Վ. Կարապետյան

Ա Ո Ւ Դ Ի Տ Ի Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

07.09.2016թ.

Համաձայն ՀՀ Ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված կարգի, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 31.08.2016թ.-ի թիվ 78 կարգադրությունը, Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությունում իրականացվել է 2016թ.-ի գործունեության համապատասխանության աուդիտ, ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ.Կարապետյանի և գլխավոր մասնագետ՝ Խ.Խաչատրյանի կողմից: Աուդիտի աշխատանքներին մասնակից դարձվեցին մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Շ.Վարդանյանը, հաշվապահական հաշվառման բաժնի պետ Ն.Թարվերդյանը և ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Ա.Սարգսյանը:

Աուդիտի հիմնական ուղղությունները.

- ա/ Օրենքներին, այլ իրավական ակտերին, ինչպես նաև վարչության գործունեությանն առնչվող այլ պայմաններին/ պայմանագրերին, գերատեսչական նորմատիվ ակտերին և այլն/ գործունեության համապատասխանության հավաստիացում,
- բ/ Ներկայացված հաշվետվություններում և ֆինանսական բնույթի տեղեկություններում արտահայտված տվյալների համապատասխանության հավաստիացում.
- գ/ Հաշվապահական հաշվառման գրանցումներում արտացոլված տվյալների համապատասխանության հավաստիացում:

Աշխատանքը կատարեցին՝ Վ.Կարապետյանը և Խ.Խաչատրյանը: Ունեն բարձրագույն տնտեսագիտական կրթություն: Վ.Կարապետյանը ունի ֆինանսական վերահսկողության փորձ, ներքին աուդիտորի երեք տարվա աշխատանքային փորձ: Խ.Խաչատրյանը ունի 10 ամսվա ներքին աուդիտորի փորձ:

Վարչությունում ռիսկի գնահատումը և ներքին վերահսկողությունը

Ըստ ձեռք բերած տվյալների ռիսկը և ներքին վերահսկողությունը գնահատելու համար հիմք ենք ընդունել ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ստանդարտը:

Վերահսկողության ռիսկի նախնական գնահատումը թույլ է տալիս եզրահանգելու, որ վարչության ներքին հսկողության համակարգը՝ բավարար է գործել: Հանրային ոլորտի հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու սկզբունքները պահպանված են:






Վարչության գործառույթների համապատասխանության աուդիտ:

Համապատասխանության աուդիտը նախատեսված է օրենքներին, այլ իրավական ակտերին, ինչպես նաև վարչության գործունեությանն առնչվող գերատեսչական նորմատիվ ակտերին համապատասխանությունն ուսումնասիրելու համար, արդյունավետության գնահատման և օրենքների, այլ իրավական ակտերին և պայմաններին վարչության գործունեության համապատասխանության վերաբերյալ մարզպետին և ներքին աուդիտի կոմիտեին հավաստիացման համար:

Համադրել ենք մարզպետարանի աշխատակազմի պահպանման փաստացի ծախսերի համապատասխանությունը «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 24.12.2015 թ.-ի թիվ 1555-Ն որոշմամբ սահմանված բյուջեի կատարման համամասնությունների, ծախսերի նախահաշվի և հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին հաշվետվության հետ: Ըստ բյուջեի կատարման համամասնության ծախսերը կազմում են 163916.0 հազ.դրամ, նախահաշվով՝ 163916.0 հազ.դրամ, բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին հաշվետվության՝ 151899.9 հազ.դրամ: Ըստ բյուջետային դասակարգման հոդվածների շեղումներ չկան:

Եզրակացություն.

Աուդիտի արդյունքում պարզեցինք, որ անհամապատասխանություններ չկան:

Ներքին աուդիտի բաժնի պետ՝		Վ. Կարապետյան
Ներքին աուդիտոր՝		Խ. Խաչատրյան
Ֆին. և սոցիալ-տնտ. զարգացման վարչության պետ՝		Շ. Վարդանյան
Հաշվապահական հաշվ.բաժնի պետ՝		Ն.Թարվերդյան
Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ՝		Ա.Սարգսյան